ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

24 Դեկտեմբերի 2019 թ.
№ 16 (1050)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ-2019»

Կյանքի տարբեր ասպարեզներում շատերն են ձգտում լինել լավագույնը, առավել ևս՝ երիտասարդները, որոնց համար լավագույնը լինելու պատեհությունն անպայման դառնում է նոր հաղթանակներ գրանցելու շարժառիթ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում 10 տարի առաջ մեկնարկեց «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը, և, ահա, հոբելյանական 10-րդ տարում շարունակվում են մրցանակաբաշխության ավանդույթները. նախ ընտրվում են ֆակուլտետային լավագույն ուսանողները, որոնցից էլ ընտրում են ամենալավագույնին:

Մրցանակաբաշխության մեկնարկը տրված է. ֆակուլտետների լավագույն ուսանողներ Վարդուհի Մկրտչյանին, Տաթև Արշակյանին, Գոհար Քոլոզյանին, Նարինե Թաթոյանին, Մարիամ Հարությունյանին, Տաթևիկ Սայադյանին, Անուշ Ներսիսյանին, Մանուշակ Մուրադյանին, Արմինե Թաթոյանին և Վարդուհի Գրիգորյանին հավաստագրեր է հանձնում համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը:

«Արդեն 10 տարի համալսարանում իրականացվում է «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը: Սկզբում մեզ քննադատում էին, հետո փորձում կրկնօրինակել՝ չստացվեց, իսկ մենք հաջողությամբ շարունակում ենք այն անցկացնել: Ես միշտ ասել եմ և կրկնում եմ՝ մեր համալսարանի ամենակարևոր մարդը ուսանողն է: Մենք ամեն ինչ անում ենք, որ մեր համալսարանը լինի ամենալավագույնը»,-ասաց ռեկտորը՝ վստահություն հայտնելով, որ լավագույն ուսանողներն ապագայում կհամալրեն բուհի աշխատակիցների շարքերը:

Առաջին տարվա լավագույն ուսանող ճանաչված Տաթև Ենոքյանը լավագույնի լանջազարդը փոխանցեց 2019 թվականի լավագույն ուսանող Տաթև Արշակյանին: Նա սովորում է Պատմության և իրավագիտության ֆակուլտետում: Տաթևը գերազանց առաջադիմություն ունի և ակտիվ հասարակական աշխատանքներ է իրականացնում ֆակուլտետում և համալսարանում:

«Ինձ համար մեծ պատիվ է այն, որ ես Մանկավարժական համալսարանի առաջին մրցանակաբաշխության լավագույն ուսանողն եմ և այսօր՝ 10 տարի հետո, այս բեմում շնորհավորում եմ 2019 թվականի լավագույն ուսանողին,- ասաց

➤2

Թող գալիք 2020 թվականը լինի խաղաղության, բարեկեցության, ընտանեկան երջանկության և արգասաբեր աշխատանքի տարի:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

...Արի՜, Նո՛ր Տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Որ ավելանա աշխարհի բարին...
...Արի՜, Նո՛ր Տարի,
Գալուստդ բարի՜,
Եվ արթնացրո՛ւ քո թնդուն քայլով
Ուշ մնացածին,
Քնով տարվածին.
Տո՛ւր ապաքինում հոգով ցավածին,
Հիասթափվածին՝ նոր մի հիացում,
Սիրասթափվածին՝ մի նոր միացում.
Ձեռքից հավատը փախուստ տվածին,
Իբրև Նոր Տարվա բաղձալի նվեր,
Տո՛ւր նոր հավատի կապակուռ թևեր,
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,
Մեծին՝ մանուկի անարատություն,
Տափարակներին՝ Արարատություն,
Իսկ Երկրագնդին՝ մի առատություն,
Որ նրա վրա Քաղցը այսուհետ
Չունենա ո՛չ մի կայսրություն ու գահ,
Ու Սարսափն իրեն թագակիր չզգա.
Որ Ազատությունն իր բառե գունեղ շապիկը ճեղքած
Տրվի ճախրանքի,
Ու Մարդն ազատվի իր հին գերության նոր
հաճախանքից,
Ու Մարդն այսուհետ ո՛չ մի տեղ երբեք չգունավորվի.
Եվ որ այլևս ո՛չ մի ժողովուրդ,
Ո՛չ մի ազգ ու ցեղ
Պատմության քափից ու սև մրուրից չքունավորվի,
Դառնա լիազո՛ր, դառնա լիիրա՛վ,-
Ու մենք, վերջապե՜ս, հասկանա՛նք իրար:
Նաև հասկանա՛նք,
Որ մեր իսկ արյան գնդիկը մանր
Այս Երկիր կոչված գնդից ավելի մեծ է ու ծանր...

Պարույր ՍԵՎԱԿ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ-2019»

➢1 Տաթև Ենոքյանը:- Մանկավարժական համալսարանի «Լավագույն ուսանող» մրցույթը միշտ սպասված է: Հաճելի է կրել «Լավագույն ուսանողի» տիտղոսը, բայց այն միաժամանակ պարտավորեցնող է: Հիշում եմ՝ ինչպես 10 տարի առաջ ես էլ սրտի թրթիռով էի սպասում, թե ով կդառնա համալսարանի լավագույն ուսանողը»:

«Մեզնից յուրաքանչյուրն արժանի էր այս կոչմանը,-ասում է տարվա լավագույն ուսանող ճանաչված Տաթև Արշակայանը՝ մատնանշելով բեմում կանգնած մյուս լավագույներին»:

Պատեհ պահից օգտվելով՝ նա շնորհակալություն է հայտնում ՀՊՄՀ վարժարանի ղեկավարությանը, արտեղ սովորել է և որը լավագույնը լինելու օրինակ է ցույց տվել, հարազատ ֆակուլտետին, որ ընտանեկան ջերմ մթնոլորտ է ստեղծել ուսանողների համար, ուսանողակենտրոն գործունեություն իրականացնող համալսարանին ՝ ի դեմ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի:

Տարվա լավագույն ուսանող Տաթև Արշակյանը, որ 2020 թվականին ֆակուլտետի հասարակագիտություն մասնագիտության առաջին շրջանավարտն է լինելու, հաղթանակը նվիրում է իր բոլոր հասարակագետ ընկերներին:

Համալսարանի լավագույն ուսանողները շրջագայության մեկնեցին Արևմտյան Հայաստան, իսկ Տաթև Արշակյանը կմեկնի Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Լավագույններին իրենց կատարումներով ողջունեցին երգիչներ Սոֆի Մխեյանը, Անահիտ Խաչատրյանը և Արսեն Գրիգորյանը(Մրո):

Դե, ինչ, շնորհավորում ենք լավագույն ուսանողներին և մաղթում, որ նրանց հաջողությունները շարունակվեն՝ պատիվ բերելով ոչ միայն իրենց, այլև հարազատ բուհին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 12-ին բացվեց Չինական մշակույթի կենտրոն: Կենտրոնի բացմանը ներկա էր Հայաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Թիան Էրլունը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց դեսպանին՝ ասելով, որ համալսարանն օրեցօր ընդլայնում է իր գործակցային կապերը ՉԺՀ-ի մի շարք ուսումնական հաստատությունների հետ: Բուհի ղեկավարը հատկապես ընդգծեց այն փաստը, որ Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցում և Օտար լեզուների ֆակուլտետում դասավանդվում է չինարեն լեզուն և վստահեցրեց, որ նորաբաց կենտրոնն էլ կդառնա հայ-չինական հարաբերությունները նորովի ամրապնդող կառույց:

Կենտրոնի բացման առթիվ իր ողջույնի խոսքը հղեց ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունը: Նա հույս հայտնեց, որ չինական մշակույթի կենտրոնը կնպաստի հարաբերությունների առավել սերտացմանը և հաջողություններ մաղթեց կենտրոնի գործունեությանը: Դեսպանը խոսեց երկու երկրների՝ վերջին տարիներին տարբեր ոլորտներում զարգացող հարաբերությունների մասին և ընդգծեց մասնավորապես հայ և չինացի երիտասարդների փոխշփումները:

ՀՊՄՀ պրոֆեսոր Սերգո Երիցյանը կենտրոնի բացումը կարևոր իրադարձություն և լուրջ քայլ համարեց՝ նկատելով, որ այն իրականում միտված է հայ-չինական հարաբերությունների զարգացմանը:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն իր ելույթում համգամանորեն անդրադարձավ դեռևս վաղնջական ժամանակներից սկիզբ առած հայ-չինական հարաբերություններին, որոնք տարբեր դարերում քաղաքական, տնտեսական ու մշակութային դրսևորումներ են ունեցել:

Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանն էլ ներկայացրեց Մանկավարժական համալսարանի և չինական գործընկեր բուհերի միջև գիտական կապերը, այդ համատեքստում իրականացված գիտաժողովները, փոխադարձ այցելությունները, դասախոսությունները:

Ելույթ ունեցավ Մանկավարժական համալսարանում 4-ամսյա պրակտիկա անցնող Վան Սիջիան, ով Չինաստանի Հարավարևմտյան համալսարանի ուսանողուհի է: Նա Մանկավարժական համալսարանի ուսանողներին և հիմնական դպրոցի աշակերտներին սովորեցնում է չինարեն լեզուն, ծանոթացնում իր երկրի մշակույթի առանձնահատկություններին՝ միաժամանակ ինքն էլ առանձնակի հետաքրքրությամբ է ուսումնասիրում հայկական մշակույթը:

Վան Սիջիան ներկաների համար դուդուկով նվագեց հայկական հայտնի «Դլե յաման»-ը, իսկ համալսարանի հիմնական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները չինարեն երգ ու ասմունքով ողջունեցին հյուրերին:

«Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով»

Ասում են, թե նոր սերունդը գիրք չի կարդում, ավելի ճիշտ՝ քիչ է կարդում: Որպես հակակշիռ բերենք Մանկավարժական համալսարանի օրինակը. մեզ մոտ ոչ միայն կարդում են, այլև դառնում են «Տարվա լավագույն ընթերցող» մրցույթի հաղթողներ: Եվ այդ մրցույթներին սիրով են մասնակցում, ասել է թե՝ շատ են կարդում:

ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանի նախաձեռնությամբ ու ջանքերով 2010 թվականին առաջին անգամ կազմակերպվեց «Լավագույն ընթերցող» մրցույթը. ընտրվեցին 10 ֆակուլտետների լավագույնները և նրանցից՝ ամենալավագույնը: Վերջին տարիներին մրցույթին մասնակցում են նաև համալսարանի հիմնական և ավագ դպրոցների սովորողները:

Այս տարի արդեն 10-րդ անգամ անց է կացվում ամենաշատ գիրք կարդացողներին ընտրող ու խրախուսող մրցույթը, որն աշխույժով է լցնում համալսարանի հումանիտար ընթերցասրահը՝ ևս մեկ անգամ ընդգծելով, որ առանց գրքի չկա գիտելիք, որ գիրք կարդալը առանձնակի հաճույք է պարգևում, առաջացնում հետաքրքիր զգացողություններ:

Հատկանշական է, որ պարգևների հանձնման արարողությանը մասնակցում են նաև տարբեր մարզերից եկած ուսանողների ծնողները:

2019 թվականի համալսարանի լավագույն ընթերցող է ճանաչվել Պատմության և իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռիմա Զատիկյանը: Համալսարանի այս տարվա լավագույն ընթերցողը միջոցառմանը ներկա չէր, որովհետև նա համալսարանի լավագույն ուսանողների հետ մեկնել էր Արևմտյան Հայաստան:

2019 թվականի լավագույն ընթերցողներն են Արարատ Պետրոսյանը (ՀՊՄՀ հիմնական դպրոց, 9-րդ դասարան), Սիմոն Հովհաննիսյանը (ՀՊՄՀ ավագ դպրոց, 12-րդ դասարան), Զուլիետա Գրիգորյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, 4-րդ կուրս), Դիանա Աղասյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետ, 4-րդ կուրս), Հռիփսիմե Մինասյանը (Կուլտուրայի ֆակուլտետ, գրադարանային բաժին, 3-րդ կուրս), Լաուրա Մնացականյանը (Օտար լեզուների ֆակուլտետ, 3-րդ կուրս), Արևիկ Հակոբյանը (Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ, 3-րդ կուրս), Քրիստինե Աբրահամյանը (Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, հեռակա ուսուցման իրավագիտություն բաժին), Հռիփսիմե Ավդալյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետ, մագիստրոս, 1-ին կուրս), Հեղինե Փահլևանյանը (Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս):

«Հմայքի մրցանակակիրը» Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիդա Խաչատրյանն է, իսկ ամենակարդացող ֆակուլտետը Բանասիրական ֆակուլտետն է:

Մրցույթի շրջանակում որոշվեցին նաև տարվա ընթացքում ամենաշատ ընթերցված գրքերի հեղինակները: Այս տարի բանասիրական գիտությունների դոկտոր Լալիկ Խաչատրյանի հեղինակած գրքերը պահանջվել են 14500 անգամ, իսկ հոգեբան Ալբերտ Նալչաջյանի հեղինակած գրքերը՝ 32000 անգամ:

Բոլոր հաղթողները որպես պարգև գրքեր ստացան:

«Այլ հարթակ չկա, որտեղ այսպես խրախուսվում են լավագույն ընթերցողները: 23 հազար ընթերցող տարվա ընթացքում և 3 միլիոն գրքի տացք (շարժ),-ասաց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը:- Մեր լավագույն ընթերցողներից յուրաքանչյուրն օգտվել է 200-250 տպագիր նյութից»:

Կրթության համար գիրքն անփոխարինելի միջոց է՝ վստահեցրեց Տ. Պետրոսյանցը՝ հիշեցնելով Ալեքսանդրիայի գրադարանի մուտքին գրվածը՝ «Մտքի առողջարան»:

Ուսանողներին շնորհավորելու էին եկել բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը և ֆակուլտետների ներկայացուցիչները: Նրանք բոլորն էլ շնորհավորեցին ընթերցասեր ուսանողներին և կարևորեցին շատ ուսանելի ձեռնարկը:

Լավագույն ընթերցողների թվով մրցանակակիրը Բանասիրական ֆակուլտետն էր, որի դեկան Աշոտ Գալստյանը օրը համարեց գրքի, դպրության և ուսուցչի տոն:

Ամենաընթերցված հեղինակ Լալիկ Խաչատրյանը փաստեց, որ գրքերը կարդում են ոչ թե դաս սովորելու, այլ աշխարհայացք ձեռք բերելու համար, գիրքը կամուրջ է, որ մարդուն կապում է կյանքի հետ:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց բոլորին գրքին նվիրված ձեռնարկի և գալիք Ամանորի առթիվ: Ողջունելով գրադարանի տնօրենի նախաձեռնությունը՝ նա ասաց, որ ցանկացած համալսարանի մակարդակը կարելի է բնորոշել նրա ունեցած գրադարանով և վստահեցրեց, որ հաջորդ տարի բուհի գրադարանը կարդիականացվի, քանզի «այս հաստատությունից է կախված հայ դպրոցի ապագան»:

Երիցս ճիշտ է ասել Մարկ Ավրելին. «Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ԱԿԱԴԵՄԻԿՈՍԸ

Ամիսներ առաջ, երբ մեզ բախտ վիճակվեց դառնալ վարժարանի սան և հնարավորություն ունենալ ավելի խորությամբ ուսումնասիրել «ֆիզիկա» առարկան, մեր ուսուցչուհի Աննա Ռուբենյանը առաջին դասին ներկայացրեց դասագրքի հեղինակ էդուարդ Ղազարյանին: Իմ պատկերացմամբ՝ նա պիտի լիներ լուրջ, մռայլ մի մարդ, որի հետ հաղորդակցվելն այնքան էլ հեշտ չէ:

Օրերս մենք վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանի նախաձեռնությամբ հանդիպեցինք գրքի հեղինակին: Պարզվեց, որ նա ժպտերես, բարեհամբույր մի մարդ է, որի հետ հաղորդակցվելը ոչ միայն բարդ չէր, այլև շատ հաճելի և ուսանելի:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս էդուարդ Ղազարյանը «ֆիզիկա» առարկայից տպավորիչ, հետաքրքրաշարժ և հիշարժան դաս վարեց վարժարանի ֆիզիկամաթեմատիկական ենթահոսքի 10-րդ դասարանում: Հիանալի դասի ընթացքում մենք բացահայտեցինք այդ առարկան մեկ այլ տեսանկյունից: Մենք մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ լսում էինք պարոն էդուարդ Ղազարյանին և այնքան տպավորված էինք, որ ցանկություն հայտնեցինք նման դաս-հանդիպումները լինեն շարունակական: Ակադեմիկոսն էլ իր հերթին խոստացավ, որ ցանկության դեպքում անպայման նորից կայցելի:

Ակադեմիկոսի հետ անցկացրած մեկ դասի ընթացքում մենք քննարկեցինք Կինեմատիկայի հիմունքները, ողջ կիսամյակում մեր ուսումնասիրած նյութերը: Առավել հետաքրքիր էր նաև խոսել այն մասին, ինչ անցնելու ենք հետագա դասերին: Նա այս դասի միջոցով համակարգեց և ամրապնդեց կիսամյակի ընթացքում մեր ձեռք բերած գիտելիքները:

Հետաքրքիրն այն էր, որ այս դասից հետո մեզանից շատերի համար «ֆիզիկա» առարկան դարձավ էլ ավելի հետաքրքիր:

Մեզ համար մեծ պատիվ էր, շատ ուրախ էինք և շատ շնորհակալ մեծ գիտնականի հետ ծանոթանալու համար, որն իրականացավ մեր շատ սիրելի տնօրեն Նաիրա Սաֆարյանի և ֆիզիկայի ուսուցչուհի Աննա Ռուբենյանի շնորհիվ:

Ֆելիքս Խանգելդյան
ՀՊՄՀ հենակետային վարժարանի (ավագ դպրոցի)
X դասարանի աշակերտ

Ավարտվեց պատմության հանրապետական 5-րդ օլիմպիադան

Մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում ամփոփեցին ամենամյա դարձած Հանրապետական 5-րդ օլիմպիադայի արդյունքները պատմություն առարկայից: Հաղթողներին շնորհավորեց ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանը: Նա կարևորեց օլիմպիադայի անցկացումը, որով ամրապնդվում է բուհ-դպրոց կապը և ոչ միայն. Երևան քաղաքի և հանրապետության տարբեր մարզերի աշակերտներն այցելում են Մանկավարժական համալսարան, ծանոթանում բուհի պատմությանն ու մասնագիտություններին, իրազեկվում համալսարանի, Պատմության և իրավագիտության ֆակուլտետի առավելություններին:

Օլիմպիադային մասնակցել է 11-12-րդ դասարանների շուրջ 230 աշակերտ: Ըստ օլիմպիադայի արդյունքների՝ 1-10-րդ տեղերը գրաված աշակերտներն այս անգամ էլ համալսարանի կողմից հավաստագրեր ստացան, որով, հետագայում, այս ֆակուլտետն ընտրելու դեպքում նաև ուսման վարձի փոխհատուցում կստանան:

1-3-րդ տեղերը գրաված 4 աշակերտներ (3-րդ տեղին արժանացել է 2 աշակերտ) համալսարանի կողմից ստացան թանկարժեք ժամացույցներ:

12-րդ դասարանի աշակերտներից մրցանակակիրներ են դարձել Քաջարանի №1 դպրոցի աշակերտուհի Քրիստինե Գրիգորյանը (20 միավոր) և Գյումրիի «Ֆոտոն» վարժարանից Նելլի Ավետիսյանը (20 միավոր), իսկ 11-րդ դասարանի աշակերտներից՝ Վանաձորի № 1 ավագ դպրոցի աշակերտուհի Ամալյա Եգորյանը (19,75 միավոր) և Երևակ կրթահամալիրից էրիկա Ասատրյանը (18,75 միավոր):

Հաղթողներից շատերը գուցե ավարտելուց հետո դառնան Մանկավարժական համալսարանի վերոհիշյալ ֆակուլտետի ուսանողներ և այս օրվա հուշը նրանց համար կդառնա ապագան կառուցելու հետաքրքիր դրդապատճառ:

Ով, եթե ոչ մենք պետք է խոսենք մեր մասին

Դեկտեմբերի 12-ը Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրն է: Այդ առիթով Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոս Սիփան Ասատրյանը կազմակերպել էր քննարկում:

«Այսօր ավելի շատ կխոսենք ոչ թե հատուկ կարիք ունեցող մարդկանց խնդիրների, այլ իրավունքների մասին, կլսենք հաշմանդամություն ունեցող մարդկանց պատմությունները՝ այսպիսով մեզ համար ստեղծելով յուրահատուկ «գրադարան»,-ասաց նախաձեռնության հեղինակ, Երևանի քաղաքապետարանի ավագանու անդամ Սիփան Ասատրյանը, որը նիստերի դահլիճ էր հրավիրել ֆակուլտետի ղեկավարությանը, դասախոսներին և ֆակուլտետում սովորող հաշմանդամություն ունեցող, կրթության հատուկ կարիքներով ուսանողներին՝ «Ոչ մի քննարկում մեր մասին առանց մեզ» կարգախոսով:

Հնարավոր չէր առանց հուզմունքի լսել ուսանողների պատմությունները: Նրանք ներկայացնում էին իրենց կյանքի տարբեր փուլերը՝ հասարակության մեջ սոցիալիզացվելու, աներևակայելի դժվարությունների հաղթահարման ճանապարհը:

Գրետա Ավագյանը 26 տարեկան է: Սև ու գեղեցիկ աչք-ունքով աղջիկը չլսող է: Նա շնորհակալություն է հայտնում իր չտեսնող դասախոսին՝ Սիփանին, որը վստահորեն ասում է, թե իրենք բոլորը հավասար են, միևնույն ժամանակ՝ յուրահատուկ:

Ծնվել է Գորիսի Շինուհայր գյուղում, առողջ ընտանիքում, բայց աստիճանաբար կորցրել է լսողությունը: Մանկապարտեզն ու դպրոցի 4-րդ դասարանն ավարտելուց հետո ծնողների հետ տեղափոխվել է Երևան՝ սովորել հատուկ դպրոցում՝ սկսելով 2-րդ դասարանից: Նրան օգնության է եկել Զուբեյդա Մելիքյանը՝ հմտորեն կիրառելով ժեստերի լեզուն: Հետագայում աղջիկը որոշել է ընդունվել համալսարան, որը նրան հաջողվել է երկրորդ տարում: Այժմ փոխադրվել է 4-րդ կուրս:

«Ինձ համար մեծ պատիվ է սովորել Մանկավարժական համալսարանում, որն ինձ տվել է սեր երեխաների ու մանկավարժության հանդեպ, մենք պիտի սովորեցնենք երեխաներին՝ միաժամանակ սովորելով նրանցից: Ինձ համար կարգախոս է Կոմիտասի այն խոսքը, թե պետք է իջնել երեխաների մակարդակին՝ հասկանալու և ուսուցանելու համար նրանց», -ասում է Գրետան:

Գրետան խոստովանում է՝ լսող մանկավարժի մշակույթն ուրիշ է, նա այլ կերպ է հասկանում չլսող աշակերտին…

Ահա ինչու է ինքը որոշել մանկավարժ դառնալ, որպեսզի լիարժեք հասկանա չլսող երեխային:

Նա մասնակցել է էրազմուս+ ծրագրին, մեկնել է Եվրոպա որպես Հայաստանի խմբի ղեկավար: Նաև մանկական Աստվածաշնչի շատ հատվածների թարգմանիչն է, լիարժեք տիրապետում է հայերեն ժեստային խոսքին:

Գրետան երբեք չի հուսալքվում, նայում է առաջ, լսարանին էլ հորդորում է՝ երբեք տարբերություն չդնեք չլսող ու չտեսնող մարդկանց ու ձեր մեջ: Աղջիկն ուզում է հասկանալի լինել և հասկանալ ուրիշներին… Լիարժեք կյանքի համար ամենակարևորը թարգմանչի առկայությունն է, որը ամենամեծ խնդիրն է: Դա կնպաստի ավելի լավ սովորել:

Մանկավարժական համալսարանում Գրետային թույլատրվել է բանավոր քննությունները գրավոր հանձնել: Նա անչափ շնորհակալ է:

Ներկայացված տեսանյութում Գրետան ասում է՝ պետք է հարգել մշակույթը և լեզուները:

Ինչպիսի կամք և լավատեսություն՝ լսելով Գրետայի պատմությունը, մտածում եմ ես: Կյանքի մարտահրավերներին դիմակայելու ինչպիսի համառություն:

Հաջորդը **Հենրիկի** պատմությունն է: Նա ֆիզիկական հաշմանդամություն ունի: Ավարտել է գիշերօթիկ դպրոց, հետո աշխատել որպես անասնաբույժ, ապա ընդունվել Մանկավարժական: Հատուկ կրթության ֆակուլտետում ուսումնառությունը նրան շատ հարցերում է օգնում. վստահեցնում է՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ այստեղ յուրահատուկ վերաբերմունք կա, որով հպարտանում է:

Տիգրանը ծնվել է Երևանում: Սովորում է օլիգոֆրենոմանկավարժության բաժնի հեռակա համակարգում: Տիգրանը լողի եռակի չեմպիոն է, 7 տարեկանից է սկսել զբաղվել լողով:

Զարգացման խանգարումներով երեխաների կենտրոնում մանկավարժի օգնական է, աշխատում է աուտիզմ ունեցող երեխաներիի հետ: Մոր մահից հետո ապրում է մորաքրոջ հետ: Պատմում է, որ սկզբում դժվար էր շփվել այդ երեխաների հետ, բայց հետո հաղթահարել է:

«Մենք խնդիրներ չունենք»,-ասում է Տիգրանը, ով խաղաթերապիայի միջոցով օգնում է զարգացման խնդիր ունեցող երեխաներին:

Ալլա Սահակյանը սովորել է №14 հատուկ դպրոցում: Նա Մանկավարժական համալսարանի տիֆլոմանկավարժության բաժին է ընդունվել, որ օգնի չտեսնող մարդկանց: Նա կույր ֆուտբոլի (BLIND) հավաքականի ավագն է:

«Հաշմանդամությունն ինձ համար խնդիր է, բայց լուծելի: Հենց մենք պիտի ուղղորդենք հասարակությանը մեր խնդիրների նկատմամբ»,-ասում է Ալլան:

Գոռ Ասատրյանը հոգեբան է, կամ ինչպես ինքն է ասում, փորձում է հոգեբան դառնալ: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող տղան նկատում է՝ համալսարաններում բախվում են ֆիզիկական մատչելիության խնդրին, իսկ հարմարեցված բուհերում ավելի հեշտ կլինի տեղաշարժվել: Տրանսպորտից օգտվելիս ևս հադիպում է այդ խնդրին:

«Ես շատ եմ սիրում հոգեբանությունը, որը շատ է օգնում ինքս ինձ կերտելու, սոցիալիզացիայի հարցում»,-ասում է Գոռը՝ հավելելով, որ հաշմանդամությունը խարան չէ: Մարդիկ տարբեր են, բազմազանության մի մասը, հավասար են միայն իրավունքներով:

Ելույթ ունեցան հաշմանդամության խնդիրներ ունեցող Պոլիտեխնիկական համալսարանի ուսանող **Արտակը**, որ լողորդ է, ինչպես նաև «Լռության ձայն» ՀԿ նախագահ **Արտաշես Հովհաննիսյանը**:

Վերջում ներկաները սիրով լսեցին **Սիփան Ասատրյանի** կյանքի և սիրո պատմությունը:

«Մի օր ես կորցրի տեսողությունս և աստիճանաբար ընտանիքիս հետ հաղթահարեցի բոլոր դժվարությունները»:

Նա կարծում էր, որ ամբողջ կյանքը կապրի մենակության մեջ, սակայն հանդիպեց մի աղջկա, որը հաղթահարեց շրջապատի կարծրատիպերը և սիրեց չտեսնող տղային: Հիմա նրանք դուստր ունեն, ապրում են բոլորի նման: Բայց միևնույն է, շջապատում շատերը չեն հասկանում նրանց: Սիփանը հիշում է, թե ինչպես առաջին անգամ միայնակ, սպիտակ ձեռնափայտի օգնությամբ մտավ մետրո, իսկ տարիներ հետո նաև մենակ մեկնեց Եվրոպա:

«Մարդկանց թվում է, թե կարելի է աշխարհը տեսնել միայն աչքերով: Մենք զգում ենք աշխարհը առանց տեսնելու, բայց ընկալելի չենք մեզ շրջապատող մարդկանց համար»,- ասում է Սիփանը:

Հատուկ կարիք ունեցող ուսանողները խոսեցին կարծրատիպերը հաղթահարելու իրենց հաջողված փորձերի մասին, հիշեցին հասարակության անդամների՝ իրենց հանդեպ վերաբերմունքի հետաքրքիր դեպքեր, տեսահոլովակների միջոցով ներկայացրին իրենց պատմություններն ու առօրյա հետաքրքրությունները: Ավելի քիչ խոսեցին խնդիրների՝ թեքահարթակների, դեղին գծերի և ձայնային լուսացույցների բացակայության մասին:

«Ով, եթե ոչ մենք պետք է խոսենք մեր մասին,-ամփոփեց Սիփան Ասատրյանը:- Ես փորձում եմ ապրել և սովորեցնել մարդկանց»:

Դահլիճում ներկա դասախոսները և ելույթ ունեցողների կուրսընկերները հուզվել էին. իրենց կողքին ապրող այս մարդիկ մեծ կամքի ու մարդկային սիրո դրսևորումներով իսկապես առանձնահատուկ են և ընդամենը ջերմ վերաբերմունքի կարիք ունեն:

Ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը ողջունեց հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի աջակցությամբ կազմակերպված քննարկման ձևաչափը, որն էլ հավասար իրավունքների ճանապարհն է հարթում հատուկ կարիք ունեցող անձանց համար:

Դեկանը շնորհակալության խոսքեր հղեց ուսանողներին, որոնք հուզեցին բոլորին և հպարտության զգացողություններ պարգևեցին իրենց կամքով, խնդիրները հաղթահարելու լավատեսությամբ ու գեղեցիկ պատմություններով:

«Դուք փաստեցիք, որ կա լույսը, և այդ լույսը ակնառու էր»,-դիմեց նա հատուկ կարիք ունեցող ուսանողներին՝ հավելելով, որ սերն ու գիտելիքը անհրաժեշտություն են, որպեսզի հասարակությունը առողջ ապրի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մանկավարժական համալսարանի երախտավորները. ԼԵՎՈՆ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանում դեկտեմբերի 12-ին կազմակերպված հուշ-ցերեկույթը նվիրված էր համալսարանի նախկին Մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետի հիմնադիրներից մեկի՝ ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Գեղամի Բերբերյանի ծննդյան 110-ամյակին: Այն կազմակերպել էր Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Երախտավորի հիշատակին նվիրված միջոցառմանը մասնակցում էին համալսարանի աշխատակիցները, ուսանողներ, հրավիրված հյուրեր և հարազատներ: Թանգարանում ցուցադրված էին Լևոն Գեղամի Բերբերյանի կենսագրությանը և աշխատանքային գործունեությանը վերաբերող լուսանկարները, ստացած պարգևները և հրատարակված աշխատանքները:

Հուշ-ցերեկույթը բացեց մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանը, Լևոն Բերբերյանի կենսագրությանը և աշխատանքային գործունեությանը նվիրված սահիկահանդեսը ներկայացրեց մաթեմատիկա մասնագիտությամբ 4-րդ կուրսի ուսանողուհի Օքսաննա Սուրենյանը, իսկ Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բորիս Մակիչյանը հանդես եկավ հետաքրքիր հուշերով: Այնուհետև հուշ ցերեկույթը շարունակվեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում, որտեղ Լևոն Բերբերյանի անցած ուղու, բեղուն գործունեության մասին խոսեցին գործընկերները՝ պրոֆեսորներ Ալեքսանդր Ղուշչյանը, Համլետ Միքայելյանը, Սամվել Հարությունյանը, Գուրգեն Ղուլղազարյանը, Մկրտիչ Սահրադյանը, Վլադիմիր Կարապետյանը, դոցենտ Օլյա Սահակյանը, երախտավորի որդին՝ պրոֆեսոր Սամվել Բերբերյանը:

Նախկին ուսանողներն էլ ջերմ խոսքերով հիշեցին իրենց դասախոսի կյանքի մանրամասները՝ առանձնակի ընդգծելով բարձրագույն կրթության բնագավառում նրա կազմակերպչական և գիտական բարձր որակները և մատնանշելով խառնվածքի դրական հատկանիշներից հատկապես հումորի բարձր զգացողությունը:

Բազմավաստակ մանկավարժին, հմուտ և բանիմաց դասախոսին, սիրված գիտնականին նվիրված հուշ-ցերեկույթն անցավ հուզումնալից և ջերմ մթնոլորտում:

Լևոն Գեղամի Բերբերյանի կյանքի մի ստվար մասը սերտորեն կապված է եղել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հետ, որտեղ նա իր դասախոսական գործունեությունն սկսել է 1939 թվականից՝ որպես մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ, ապա Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան:

Ալաշկերտի գավառի Բերդ ավանում 1909 թվականին ծնված Լևոն Բերբերյանը բնականաբար կրելու էր Ալաշկերտի շիտակությունն ու բարությունը, իր կոչումը պատվով կրելու նպատակադրումը:

Այսօր նրա գործը շարունակում են իր ուսանողները՝ հանրապետությունում ճանաչված ուսուցիչներ ու գիտնականներ, իրենց գործի նվիրյալ մասնագետներ:

Լավագույն մասնագետների, ուսուցիչների ու գիտնականների, ուսման առաջավորների մի ամբողջ ծաղկաբույլ է բացվում, երբ ծանոթանում ես Լևոն Բերբերյանի ընտանիքի շառավիղների հետ: Հիրավի հայկական դասական ընտանիքի փայլուն օրինակ՝ կիրթ ու օրինակելի մարդկանց հարուստ կենսագրությամբ ու պատմությամբ:

Տարիները որքան հեռանում՝ նույնքան մոտեցնում են բուհի երախտավորների անունն ու վաստակը: Մանկավարժ-գիտնականի գործունեությունը հետաքրքիր հետք է թողել համալսարանի պատմության էջերում, որ սերունդներն իմանան ու ճանաչեն Լևոն Բերբերյան անունով երախտավորին:

Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
Մաթեմատիկայի և նրա դասավանդման ամբիոն

ՃԱՊՈՆԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում հյուրընկալվել էին Ճապոնիայի Սագայի ազգային համալսարանի Տարածաշրջանային դիզայն և կերպարվեստ ֆակուլտետի 5 ուսանող՝ պրոֆեսոր Միե Իշիի ուղեկցությամբ: Ֆակուլտետում ուսանողները մասնակցեցին հայ արվեստի պատմության, խեցեգործության, քանդակագործության, գեղանկարի, գործվածքի, համակարգչային դիզայնի և հագուստի մոդելավորման կոմպոզիցիայի դասընթացների: Եռօրյա դասընթացը ֆակուլտետում ակտիվ փոխշփման հարթակի էր վերածվել երկու երկրների ուսանողների համար, որովհետև այդ դասընթացներին մասնակցում էին նաև մեր ուսանողները:

Ճապոնացի ուսանողների համար ֆակուլտետի դասախոսները կազմակերպեցին նաև վարպետության դասեր: Կարպետագործության և քանդակագործության վարպետաց դասերին մեծ հետաքրքրությամբ մասնակցող հյուրերին միացան նաև ֆակուլտետի ուսանողները:

Դասընթացի ավարտին ուսանողները հավաստագրեր ստացան՝ իրենց գոհունակությունը հայտնելով վերապատրաստման արդյունավետ և օգտակար ընթացքի վերաբերյալ: Պրոֆեսոր Միե Իշիին էլ հանձնվեց շնորհակալագիր: Պրոֆեսորն իր ելույթում ընդգծեց, որ ներկա վերապատրաստումը երկու երկրների բուհերի միջև գործակցությունը շարունակելու լավագույն երաշխիքն է և այն անպայման շարունակականություն կունենա:

Բեմականացում՝ չինարենով

Ինչպես գիտենք, այս տարի հայ ժողովուրդը նշում է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակը: Երևանի Գ. Ստեփանյանի անվան №135 հիմնական դպրոցի չինարենի ուսուցչուհի Արմինե Հարությունյանը և աշակերտները որոշել էին հայ-չինական բարեկամության մի յուրօրինակ ցուցադրություն կազմակերպել: Հավելենք, որ դպրոցի V-VIII դասարաններում որպես երրորդ օտար լեզու չինարեն է դասավանդվում:

Աշակերտներն ուսուցչուհու օգնությամբ չինարենով հիանալի բեմադրել էին Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» և «Կիկոսի մահը» հեքիաթները:

Բոլոր մասնակիցները կերպարանափոխվել էին հեքիաթի հերոսների և գեղեցիկ դերասանական խաղով հիացրին հանդիսատեսին: Այնքան բնական էր ամեն ինչ, չինարենով հնչող խոսքն այնքան սահուն ու համոզիչ էր, որ ներկաները չզգացին, թե ինչպես ավարտվեց բեմականացումը:

Հովհաննես Թումանյանի հեքիաթների չինարեն բեմականացումը խորհրդանշում է երկու ժողովուրդների մշակույթների մերձեցումն ու կապերի ամրապնդումը:

Միջոցառմանը ներկա էին Կոնֆուցիուսի ինստիտուտի հայկական և չինական կողմերի տնօրենները, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, ուսուցիչներ, աշակերտներ…

Դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանը նշեց, որ դպրոցում չինարենի ուսուցումն ամուր հիմքերի վրա է դրված: Թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները ոգևորությամբ են մասնակցում նման միջոցառումների, որն էլ նպաստում է երկու ժողովուրդների բարեկամության և մշակույթների սերտացմանը:

Երաժիշտ կատարողի ապրելու կերպը

Մանկավարժական համալսարանի դոցենտ, կլառնետահար և սաքսաֆոնահար Սևադա Շհոյանը ակտիվ ստեղծագործական առօրյայով է ապրում: Մի քանի գործիքի տիրապետող Սևադան պարբերաբար մասնակցում է միջազգային երաժշտական մրցույթ-փառատոնների՝ մշտապես զբաղեցնելով պատվավոր հորիզոնականներ: Մեծ հաջողություններ են գրանցում նաև նրա ուսանողները և աշակերտները:

Աշխատանքը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբում՝ որպես կլառնետահար, սաքսաֆոնահար և մենակատար կլառնետահար, Հանրային հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբում, դասախոսական աշխատանքը Կոնսերվատորիայում և Մանկավարժական համալսարանում նա համատեղում է սիրով և ջանադրաբար: Մանկավարժական և երաժշտական գործունեությունը վաղուց Սևադայի համար դարձել է կենսակերպ, առանց որի նա չի պատկերացնում իր ապրած յուրաքանչյուր օրը:

Մանկավարժական համալսարանում նրա ստեղծած «Նաիրի» կլառնետահարների քառյակը Կոմիտասի և մյուս հայ երգահանների ստեղծագործությունների կատարումով շուրջ յոթ տարի հանդես է գալիս տարբեր բեմերում՝ պարբերաբար մասնակցելով նաև բարեգործական համերգների:

Մեր թերթը պարբերաբար անդրադառնում է Սևադայի գործունեությանն ու հաջողություններին:

2018 և 2019 թվականներին անընդմեջ Սևադան Համաշխարհային կատարողական արվեստի ասոցիացիայի կողմից կազմակերպված մրցանակաբաշխությանը ճանաչվել է տարվա լավագույն մենակատար, իսկ «Նաիրի» քառյակը ճանաչվել է տարվա լավագույն նախագիծ:

Սևադա Շհոյանն արմատներով Վարդենիսից է: Մայրը երաժիշտ մանկավարժ է, կոմիտասագետ, վաստակավոր մանկավարժ, Վարդենիսում նա տարբեր տարիքային երգչախմբեր է ստեղծել, որոնք գործում են մինչ օրս: Նա միաժամանակ ստեղծագործում է, Վարդենիս քաղաքի օրհներգի հեղինակն է: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ Սևադայի մայրը եղել ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի առաջին շրջանավարտներից: Հայրը, թեև մասնագիտությամբ կենսաբան-անասնաբույժ է, տիրապետում է մի քանի երաժշտական գործիքների: Երաժիշտներ են նաև Սևադայի քույրը և եղբայրը: Սևադայի մորական պապը եղել է դուդուկահար: Մի խոսքով՝ երաժշտական ընտանիք: Ահա թե որտեղից է գալիս Սևադա Շհոյանի սերը երաժշտական արվեստի և գործիքների հանդեպ:

Արդեն 20 տարի է՝ նա աշխատում է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում: Իր գործունեության ընթացքում ֆակուլտետում հիմնադրել է «Արև» ժողովրդական գործիքների անսամբլը, որը միջազգային մրցույթում ստացել է «Գրան պրի» մրցանակ: Այնուհետև հիմնադրել է սաքսաֆոնահարների քառյակ, որը ՀՀ սփյուռքի, ՀՀ մշակույթի նախարարությունների շնորհակալագրերի է արժանացել՝ ներկայացնելով Կոմիտասի ստեղծագործություններն ի պատիվ այն հանգամանքի, որ Կոմիտասը առաջիններից է, որ Հայաստան է բերել սաքսաֆոն գործիքը և այն անվանել սաքսափող:

Սևադա Շհոյանի ուսանողները Մանկավարժական համալսարանն ավարտելով փայլուն առաջադիմությամբ՝ մեկնում են պարտադիր զինվորական ծառայության, համալրում են զինվորական փողային նվագախմբերի շարքերը՝ բարձր պահելով մեր համալսարանի և իրենց դասախոսի պատիվը:

Վերջերս «Մոցարտ» միջազգային մրցույթում ֆակուլտետի ուսանողները երեք առաջին տեղի մրցանակ բերեցին, որոնցից մեկը՝ կլառնետահար, մեկը՝ դուդուկահար, մյուսն էլ հանդես եկավ իր հեղինակային ստեղծագործությամբ՝ համալսարանի ժողգործիքների նվագախմբի երաժշտներից բաղկացած նորաստեղծ «Լուսե» անսամբլով:

ՀՊՄՀ դոցենտի մանկավարժական գործունեության հաջողություններին մեծապես նպաստում են ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը և ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Արա Գևորգյանը:

Հավելենք նաև, որ ամբիոնն ապահովված է պրոֆեսիոնալ երաժշտական գործիքներով, ինչը դասախոսը համարում է հաջողության գրավականներից մեկը:

Տարին ավարտվեց մեծ ձեռքբերումներով, իսկ երաժշտական հաղթարշավը կշարունակվի գալիք տարում, որովհետև Վիեննայից արդեն հրավեր է ստացվել:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հայ պարբերական մամուլի առաջնեկը 225 տարեկան է

Հայ պարբերական մամուլի առաջնեկ «Ազդարարի» 225-ամյակի, ՆՍՕՏՏ Գարեգին Երկրորդի կողմից 2019 թվականը «Ընտանիքի տարի» և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինի կողմից «Հայ մամուլի տարի» հռչակելու առթիվ նոյեմբերի 28-29-ը Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպվեց «Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի» խորագրով երկօրյա գիտաժողով, որին մասնակցում էին 40-ից ավելի մտավորականներ Սփյուռքից, Հայաստանից և Արցախից: Ներկա էին նաև հայ անվանի մատենագետ, պատմաբան Արտաշես Տեր-Խաչատուրյանի որդիները՝ Տարոն և Զարեհ Տեր-Խաչատուրյանները:

Բացման խոսքով հանդես եկան Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Սարիբեկյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Տեր Արարատ քահանան:

Զեկուցումներով հանդես եկան նաև Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սուքիասյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Արմինե Հակոբյանը և Զարուհի Տոնոյանը:

Գագիկ Սուքիասյանի զեկույցի թեման պարբերական հրատարակությունների մատենագիտական նկարագրության հարցի շուրջ էր, որտեղ համակողմանիորեն ներկայացված էին մի շարք հիմնադրույթներ:

Ըստ Գ. Սուքիասյանի՝ ազգային արժեհամակարգի ձևավորման, պահպանման և զարգացման գործում կարևոր նշանակություն տալով հայ մամուլի դերին, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել պարբերական հրատարակությունների և հոդվածների մատենագիտական նկարագրության հարցերին, տեսության և պրակտիկայի փոխադարձ կապերի զարգացմանը, ՁԼՄ-ների միջոցով գրադարանագիտական-մատենագիտական գիտելիքների տարածմանը: Բանախոսն առաջարկեց նաև սահմանել մատենագիտական նկարագրության միասնական կարգ, որի կարիքը Հայաստանի և Արցախի Հանրապետություններում խիստ անհրաժեշտ է և պահանջվում է համակարգային մոտեցում:

Արմինե Հակոբյանը հանդես եկավ «Ազդարարը մատենագիտական ցանկերում» զեկուցումով:

Հայ առաջին պարբերականի մասին պատմական փոքրիկ ակնարկից հետո նա ներկայացրեց «Ազդարարը» պարբերական մամուլի մատենագիտական ցանկերում ըստ ժամանակագրության՝ մասնավորապես Մինաս Գափամաճյանի, Գրիգորիս Գալեմքարյանի, Գարեգին Լևոնյանի, Թեոդիկի, Ռաֆայել Կարապետյանի, Հովհաննես Պետրոսյանի, Ամալյա Կիրակոսյանի, Արտաշես Տեր-Խաչատուրյանի և այլոց աշխատություններում՝ կարևորելով նրա դերն ու նշանակությունը: Նա նաև անդրադարձավ 2014 թ.-ին Հայաստանի Ազգային գրադարանի ձեռնարկած «Հայկական շարունակական հրատարակությունների» համահավաք էլեկտրոնային գրացուցակին, որտեղ նույնպես «Ազդարարը» իր պատվավոր տեղն է զբաղեցնում: Այսպիսով, հայ ժողովրդի գիտակրթական և հասարակական կյանքում անկյունաքարային դեր ու նշանակություն ունեցող հայ մամուլի առաջնեկ «Ազդարարը» տարատեսակ մատենագիտական ցանկերում իր հաստատուն տեղն է գտել, և դա ներկայացվում է առ այսօր:

Զարուհի Տոնոյանը ներկայացրեց «Հայոց եղեռնի գրականության տեղեկատվական նշանակությունը պարբերական մամուլի էջերում» թեմայով զեկուցումը, որտեղ հանգամանալից խոսեց հայոց պարբերական մամուլի տպագրության սկզբնավորման, անցած ուղու, ինչպես նաև ազգանվեր և ազգապահպան գործի մասին: Ըստ Տոնոյանի Հայոց եղեռնի ուսումնասիրումն՝ իր բազմաթիվ առումներով և դիտանկյուններով, արդեն մի քանի տասնամյակ չի կորցնում արդիականությունը հայկական մամուլում: Աներկբա է Հայոց եղեռնի և ցեղասպանության մատենագիտության թե՛ արդիական, թե՛ գիտական կարևորությունը մեր օրերում, երբ հայերի ցեղասպանությունը սկսել են ճանաչել նորանոր երկրներ: Ի մի բերելով Մեծ եղեռնի մատենագիտության բնագավառում հայ պարբերական մամուլի որոշակի ձեռքբերումները՝ նա նշեց, որ դրանք ամուր և հուսալի հենարան են Հայոց Մեծ եղեռնի համապարփակ գիտական պատմության ամբողջացման ճանապարհին, հիմնախնդիր, որն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գաղափարաքաղաքական օրախնդիր նշանակություն: Ընդարձակ են մամուլի հատկապես ապրիլյան օրերին վերաբերող տեղեկատվությունները: Ապա հավելեց՝ մամուլի բազմաթիվ հրապարակումներում ընդգծվում է, որ հայ ժողովուրդը պետք է շարունակի պայքարը, որպեսզի միջազգային մակարդակով պաշտոնապես ճանաչվի ու դատապարտվի հայերի ցեղասպանությունը: Հայոց Մեծ եղեռնը մշտապես եղել է հայկական և արտասահմանյան մամուլի ուշադրության կենտրոնում: Այս առումով մամուլի անդրադարձներն ու հրապարակումները կարևոր սկզբնաղբյուր են հանդիսանում Հայոց ցեղասպանության հետ առնչվող հարցերի լուսաբանման համար:

Ի վերջո, երկու դարից ավելի պատմություն ունեցող հայերեն առաջին պարբերականի՝ «Ազդարարի» առաջին համարը տպագրվել է Մադրասում 1794-96 թվականներին. ականավոր լուսավորիչ Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրությամբ: Չնայած ամսագրի կարճատև կյանքին՝ հայ առաջին խմբագրապետին հաջողվել է ձևավորել հնդկահայ գաղթօջախի հասարակական կյանքի կարևորագույն դրսևորումները: «Ազդարարը» իր բնույթով գրական-հասարակական հանդես է, որի առանցքում մշտապես ընկած են եղել հայ մտքի ու ինքնագիտակցության թեմաները: Հայ առաջին պարբերաթերթի հիմնադրումով Հարություն Շմավոնյանը նոր և բարձր սանդղակի վրա դրեց հայ ժողովրդի քաղաքակրթական միտքը:

Մարիամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

Նախաձեռնություն իրագեկման նպատակ ուներ

Դեկտեմբերի 7-ը Հայաստանում նշվում է որպես երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայելու օր:

Համալսարանի արտակարգ իրավիճակների, քաղպաշտպանության, առաջին բուժօգնության և էկոլոգիայի ամբիոնները համատեղ կազմակերպել էին տեղեկատվական միջոցառում՝ նվիրված երկրաշարժերին:

Միջոցառմանը ներածական խոսքով հանդես եկան արտակարգ իրավիճակների, քաղպաշտպանության, առաջին բուժօգնության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Նարինե Սահակյանը և ՀՊՄՀ դասախոս, փրկարար ծառայության փոխգնդապետ Պերճ Կարապետյանը: Նրանք խոսեցին սեյսմիկ գոտու վրա գտնվող Հայաստանի ռիսկայնության, Սպիտակի աղետալի երկրաշարժի ուժգնության մասին՝ ընդգծելով իրազեկված լինելու անհրաժեշտությունը:

Աշխարհում տարեկան զգալի թվով երկրաշարժեր են լինում, իսկ դրանց օջախներում երկրաշարժերը կարող են կրկնվել 50-60 տարին մեկ: Ցավոք, երկրաշարժերի ուժգնության չափերը նախապես կանխատեսել հնարավոր չէ, բայց դրանց մասին գիտելիքները կարող են նվազեցնել ռիսկերը:

Ներկաները հոտնկայս լսեցին Շառլ Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան» երգը, ապա տարբեր ֆակուլտետների և կուրսերի ուսանողները ներկայացրին ծավալուն տեղեկատվություն երկրաշարժերի մասին՝ անդրադառնալով բնական և տեխնածին երկրաշարժերին, Հայկական լեռնաշխարհում տարբեր տարիների տեղի ունեցած՝ Անիի, Դվինի, Գառնիի, Գյումրիի, Սպիտակի երկրաշարժերին, խոսեցին երկրաշարժերի ինտենսիվության և մագնիտուդի տարբերությունների մասին, ներկայացրին թվային վիճակագրություն, անդրադարձան Սպիտակի երկրաշարժի պատճառներին ու վարկածներին, տվեցին ավերման գոտու բնութագիրը, չմոռանալով խոսել անպատրաստ լինելու և թույլ տրված սխալների մասին:

Սպիտակի արտասովոր կործանարար երկրաշարժից անցել է 31 տարի: Երկրաշարժ, որի էպիկենտրոնը (10 բալ) Սպիտակի մարզի Շիրակամուտ գյուղն էր (Նալբանդ): Տեղական ժամանակով ժամը 11 անց 41 րոպեին սկսված ցնցումները կես րոպեում ավերեցին Հայաստանի հյուսիսարևմտյան գրեթե ողջ հատվածը՝ 10 հազար կմ ընդգրկվածությամբ՝ Սպիտակը, Վանաձորը, Գյումրին, Ստեփանավանը՝ հարակից գյուղերով…

Նախաձեռնությունը իրազեկման և յուրաքանչյուրի մեջ զգոնություն արթնացնելու նպատակ ուներ: Չէ՞ որ զոհերի անհաշիվ քանակությունը մի շարք սխալների արդյունք էր. շենքերը վատ էին կառուցված, շինարարների կողմից թերագնահատված էր սեյսմիկ վտանգը (շենքերը նախատեսված էին 7-8 բալի համար), երկրաշարժի դեպքում վարքականոնների մասին բնակչությունն իրազեկված չէր, փրկարարական աշխատանքներին էլ հիմնականում պատրաստ չէր:

Հայաստանը գտնվում է երկրաշարժերի ռիսկային գոտու վրա և ամեն րոպե պետք է պատրաստ լինել աղետին դիմակայելուն:

Աշխարհը մարդասիրական մեծ օգնություն ցուցաբերեց Հայաստանին. դա հնարավոր չէ մոռանալ: Աշխարհը մեզ հետ կիսեց այն օրերի սարսափները: Սակայն առ այսօր Շիրակի մարզը համարվում է աղետի գոտի, բնակչության 30 %-ը դեռ ապրում է տնակներում:

Ուսանողները ներկայացրին աղետի ընթացքի տարբեր իրավիճակներ և ցույց տվեցին առաջին բուժօգնության և հոգեբանական աջակցության օրինակներ: Վերջում էլ հորդորեցին՝ եղեք տեղեկացված, եղեք զգոն և տիրապետեք երկրաշարժի դեպքում կիրառելի վարքականոններին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Դա անհնար է մոռանալ

Երկրաշարժը փոշիացնում է ամեն ինչ, իսկ այդ ամենը վերականգնելու համար տարիներ են պահանջվում: 1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանը ցնցվեց Գյումրիի և Սպիտակի ավերիչ երկրաշարժից: Կես րոպեում հզոր ցնցումների հետևանքով ավերվեց Հանրապետության գրեթե ողջ հյուսիսային մասը:Ավերիչ երկրաշարժից անցել է արդեն 31 տարի,բայց հետքերը մինչև այսօր թարմ են ու դեռ կան ընտանիքներ, որոնք դեռ տնակներում են ապրում: Ավերիչ երկրաշարժը խլեց 25 հազար մարդու կյանք, 100 հազարը ստացան մարմնական տարբեր վնասվածքներ և 500 ընտանիք մնաց անօթևան: Անցել է 31 տարի, բայց Հայաստանի երկրորդ քաղաքում դեռ կան շինություններ, որոնք աղետի լուռ, բայց միևնույն ժամանակ խոսուն վկաներն են:

Երկրաշարժից հետո մեր հայրենակիցները բազմաթիվ նախաձեռնությունների շրջանակում իրենց օգնությունն էին առաջարկում, նրանց կողմից ստեղծվեցին «ՍՈՍ Արմենի», «Ազնավուրը Հայաստանին» և տասնյակ այլ կազմակերպություններ: Բազմաթիվ սփյուռքահայ մասնագետներ՝ բժիշկներ, հոգեբաններ, շինարարներ մնացին Հայաստանում և մասնակցեցին փրկարարական և վերականգնողական աշխատանքներին: Տարբեր պետություններ շարունակեցին իրենց օգնությունը նաև հետագա տարիներին: Այդ դժվար օրերին մեր երկրին ձեռք մեկնեցին ավելի քան 113 երկիր ու 7 միջազգային կազմակերպություն:

Աղետը միավորում է մարդկանց, իսկ մարդասիրությունը նման պահերին սահմաններ չի ճանաչում: Շնորհակալություն բոլոր այն երկրներին և մարդկանց, որոնք մեր կողքին էին այն աղետալի օրերին, շնորհակալություն աշխարհին՝ մեզ օգնության ձեռք մեկնելու համար: Մենք դա երբեք չենք մոռանա:

ՖԵՆՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Լրագրության բաժին, 1-ին կուրս

Չմոռացված ողբերգություն

Աշխարհում տեղի ունեցող աղետները միշտ էլ իրենց խոր հետքն են թողնում մարդկանց վրա. խարխլվում են հազարավոր ճակատագրեր, որբանում մանուկներ, սակայն մարդ արարածը շարունակում է ապրել և արարել՝ ի հեճուկս բոլոր փորձությունների:

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Սպիտակում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որի հետևանքով զոհվեցին, վիրավորվեցին, անտուն մնացին շատերը: Ամեն տարի դեկտեմբերի 7-ին հայ ազգը վերապրում է տեղի ունեցած ողբերգությունը: Այդ առիթով ՀՊՄՀ հենակետային վարժարանի հումանիտար (անգլերեն) հոսքի աշակերտները ուսուցչուհի Աննա Խատայանի ղեկավարությամբ կազմակերպել էին հուշ-դաս:

Միջոցառումը հագեցած էր կյանքից վերցված իրական կերպարներով և դեպքերով, համահունչ երաժշտությամբ, երկրաշարժի դրվագներով: Աշակերտները ելույթ ունեցան երեք լեզուներով՝ հայերենով, անգլերենով և ֆրանսերենով: Չնայած ողբերգական դեպքերին, ինչպես նաև հուզիչ ներկայացմանը՝ միջոցառումը ավարտվեց լավատեսական երանգներով:

Հուշ-դասին ներկա էին վարժարանի տնօրենը, փոխտնօրենները, ինչպես նաև ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը:

Դեկան Տիգրան Միքայելյանը տպավորված էր մասնակիցների դերասանական խաղով, հստակ ու գեղեցիկ խոսքով:

Տնօրեն Նաիրա Սաֆարյանն էլ հավելեց, որ աշակերտների ելույթներն այնքան հագեցած էին և իմաստալից, որ նաև օտար լեզվով կարողացան հուզել ներկաներին:

«ԳՐՔԻ ԾՆՈՐՀԱՆԴԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱՎԱՍԱՐԴ, ՆՈՐ ՏԱՐՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ»

Դեկտեմբերի 13-ին Պեյո Յավորովի անվան №131 դպրոցում էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողները: Նրանք ամփոփում էին ճանաչողական պրակտիկան: Տեղի էր ունենալու Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի մի խումբ ուսանողների և մեթոդիստ Աշխեն Յուզբաշյանի հրատարակած գրքի շնորհանդեսը: Բայց մինչ այդ հյուրերին ներկայացվեց ազգագրական շնչով ողողված միջոցառում, որն ընդգրկում էր Կաղանդից մինչև Սուրբ Ծնունդ ընկած հատվածի արարողակարգերը: Հետաքրքիրն այն է, որ տարանջատում չկար ուսանողների և աշակերտների միջև: Դա վկայում էր թե՛ նստարանների, թե՛ խոսքերի բաշխվածությունը: Հանգամանք, որ աննկատ չմնաց ներկաների աչքից:

Միջոցառումը սկսվեց Նոր տարվա այլաբանությամբ, ձգվեց Նավասարդով և ավարտվեց Սուրբ Ծնունդով: Աշակերտների ոգևորությունը սահման չուներ: Միջոցառման գեղեցիկ տարր էր Կաղանդ պապի կերպարը, որն իր հետ բերում է բարիքներ և ուրախություն. «Ես եկա հեռուներից ձեր՝ մարդկության համար... եկա, որ ասեմ՝ ամուր պահեք ձեր ունեցածը, բայց ուրախությամբ կիսեք այն ձեր ընկերների ու կարիքավորների հետ, և ես կբերեմ այն, ինչի կարիքն ունեք դուք»:

Սեղանները շնչում էին ազգագրական ոգով: Կաղանդի ծառը յուրօրինակ հմայք էր պարգևում: Մի ինքնատիպ իրարանցում է միջինքով գաթան, որն ամանորյա տարեհացի նման ներկաների ու մեր հյուրերի միջև պիտի ապահովեր մտերմություն, ջերմություն ու լուսավոր տրամադրություն: Միջինքի հետ մատուցվեց նաև քաղցր հաց և գինի:

Միջոցառման ավարտից հետո կայացավ գրքի շնորհանդեսը: Մեթոդիստ Աշխեն Յուզբաշյանը ներկայացրեց գրքի ստեղծման պատմությունը: Խոսքով հանդես եկան Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, պրակտիկայի պատասխանատու Լուսինե Գալստյանը, հայ հին և միջնադարյան գրականության դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ալելիտա Դոլուխանյանը, փոխդեկան Նաիրա Խաչատրյանը և Պ. Յավորովի անվան № 131 դպրոցի տնօրեն Սուսաննա Դավթյանը: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին հիանալի միջոցառման առթիվ և խոստացան ուսումնասիրել գիրքը:

«Մենք ուսուցիչն ենք նոր դպրոցի» գրքում ամփոփված են «Գիտաֆանտաստիկ ուսուցիչներ» խմբի ուսանողների ճանաչողական պրակտիկայի ընթացքում կրթության փիլիսոփայության խոհերը, որոնք, կարծում ենք, նոր դպրոցի ուսուցիչների կրթության և մտածողության հիմքում են:

Լիլիթ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
3-րդ կուրս

Լույս է տեսել



Լույս է տեսել «Հետաքրքրաշարժ բնագիտություն» ուսումնական ձեռնարկը, որի աշխատանքները կատարվել են Մանկավարժական համալսարանի բնագիտական կրթության գիտամեթոդական լաբորատորիայում:

Ձեռնարկի հեղինակներն են գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Էդուարդ Ղազարյանը, Արմեն Թռչունյանը, Գևորգ Դանագուլյանը, Գագիկ Մելիքյանը և Սոս Մայիլյանը:

Ձեռնարկը ներառում է բնության տարատեսակ մարմիններին, երևույթներին վերաբերող հետաքրքրաշարժ հարցեր, խնդիրներ, գործնական առաջադրանքներ: Այն նախատեսված է հանրակրթական դպրոցի 5-9-րդ դասարանցիների համար, օգտակար կարող է լինել բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են բնական գիտություններով:

Հեղինակների կարծիքով՝ միջին դպրոցում սովորողները բնության տարբեր օբյեկտների, երևույթների, քիմիական նյութերի, կենդանի օրգանիզմների և մարդու մասին տարրական գիտելիքներ են ստանում 5-6-րդ դասարաններում «Բնագիտություն» դասընթացի, իսկ 7-9-րդ դասարաններում՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության ուսումնասիրմամբ: Նյութի մատուցման դասագրքային ձևաչափը, սահմանափակ ծավալները հնարավորություն չեն ընձեռում ուսումնական այս բնագավառում առավելագույնս բավարարելու սովորողների տարատեսակ հետաքրքրությունները:

Ի տարբերություն դպրոցական դասագրքերում և խնդրագրքերում ներառվող իդեալականացված խնդիրների՝ այստեղ ընդգրկված են իրական աշխարհին անմիջականորեն առնչվող հարցեր, խնդիրներ, որոնց լուծումը շատ դեպքերում պահանջում է անհրաժեշտ տվյալների ընտրություն, թվային արժեքների գնահատում: Այլ խոսքով՝ յուրաքանչյուր խնդրի լուծում նման է փոքրիկ գիտական հետազոտության, որը պահանջում է գիտելիքներ մի քանի բնագիտական առարկաներից:

Ձեռնարկի «Հետաքրքիր է իմանալ» խորագրի ներքո առանձնացված են տարատեսակ նյութերի, բույսերի, կենդանիների, մարդու, անվանի գիտնականների, նրանց հայտնագործությունների մասին հետաքրքիր տեղեկություններ:

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դասախոս Տարոն Ալեքսանյանն ամանորյա նվեր է մատուցել ֆակուլտետին՝ նախասրահի սյուները ձևավորելով եռաչափ տոնածառով:

Ամանորը Մոսկվայի հայկական դպրոցում

Մոսկվայի Հայաստանի դեսպանատանը կից գործող «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տարին ամփոփեցին Ամանորին նվիրված միջոցառմամբ: Դպրոցի կոլեկտիվն ի մի բերեց բոլոր այն հաջողություններն ու ձեռքբերումները, որով ոտք են դնում 2020 թվական:

Միջոցառման հանդիսավոր մասն առանձնացավ շնորհավորական ելույթներով. ՌԴ-ում Հայաստանի դեսպանի խորհրդական Կարինե Դանիելյանը, դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանը շնորհավորեցին բոլորին գալիք Ամանորի առթիվ: Տնօրենն իր երախտագիտությունը հայտնեց դեսպան Վարդան Տողանյանին և դեսպանատան աշխատակիցներին՝ արդյունավետ համագործակցության և միջոցառումը դեսպանատան ներկայացուցչական սրահում անցկացնելու հնարավորություն ընձեռելու համար:

Ելույթ ունեցավ նաև ՌԴ պատվավոր շինարար, «ՅունիՊրես» հրատարակչության գլխավոր

տնօրեն Սամվել Ղազարյանը, ում երեխաներն ու թոռները ժամանակին սովորել են այս դպրոցում:

Այնուհետև կիրակնօրյա դպրոցի աշակերտները հյուրերին ներկայացրին ամանորյա ստեղծագործական հագեցած ծրագիր, որին աջակցել էր դպրոցի ուսուցչական կոլեկտիվը:

Գրական-երաժշտական ծրագիրը՝ համեմված ազգային պարերով ու հեքիաթների կերպարներով բեմականացված աշխույժ երգչախմբային կատարումներով, Նոր տարվա տոնական մթնոլորտ էր ստեղծել, որի կենտրոնում հայկական Ձմեռ պապն ու Ձյունանուշն էին:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 25.12. 2019 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ